«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 9/792

«27» 06 2025թ.

**«ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ ԴԱՆԻԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Դանիելյան,

Համաձայն 2025 թվականի մայիսի 07-ին «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի և «Սոպրանո Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված էլեկտրատեխնիկայի, կենցաղային գույքի և պարագաների մատակարարման թիվ «ԷԱՃԱՊՁԲ-2025/12-2-ԵՊԲՀ-2» պայմանագրի՝ «Սոպրանո Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը պարտավորվել է պայմանագրի կնքման օրվանից երեսուն օրացուցային օրվա ընթացքում մատակարարել պայմանագրում ներառված, հրավերով նախատեսված թիվ 3-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքը՝ 2 (երկու) հատ «ֆոտոխցիկ»:

Վերը նշված ժամկետը լրացել է 07.06.2025 թվականին:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը՝ 19.06.2025 թվականին «Սոպրանո Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից հայտով ներկայացված էլեկտրոնային փոստի, այն է՝ sopranoarm@gmail.com հասցեին info@ysmu.am հասցեից ուղարկել է թիվ 09/760 գրությունը, որով վերջինիս տրվել է լրացուցիչ 5 (հինգ) օրյա ժամկետ՝ պայմանագրով նախատեսված ապրանքները մատակարարելու համար, սակայն մինչ օրս այն չի մատակարարվել:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատած «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ պայմանագիրը կհամարվի լուծված սույն ծանուցումը տեղեկագրում հրապարակելու օրը:

Հարգանքով

ԴԵԿԱՆ՝ **ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ**

Կատարող՝ Էդ.Ադիլխանյան
010-301-000 (430)